

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

12.07.2013թ. նիսարին

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ա.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, Լ.Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Եղիազարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Տեղեկատվական տեխնոլոգիաների տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի 1-ին կարգի մասնագետ Կ.Եսայանը:

### **Նիսարում լսվեցին հետևյալ հարցերը.**

1.«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

### **Որոշվեց՝**

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժինը և հասարակայնության հետ կապերի բաժինը միաձուլման ձևով վերակազմակերպել վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :

**2.«ՀՀ ՎՊԽ 2012 թվականի հուլիսի 9-ի թիվ 12-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Մ.Պետրոսյան/*

**Որոշվեց՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012թ.հուլիսի 9-ի «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև 2-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության տարածքում» բառերից հետո լրացնել «կառուցապատող, ինչպես նաև» բառերը:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

**3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

3.1.Հաղորդում՝ Իտալիայի Թուրին քաղաքում 2013 թվականի հունիսի 3-ից 6-ը «ՄԱԿ-ի համակարգի անձնակազմի քուլեջի հրավերով Դեվինֆո 7-ի օգտագործման վերաբերյալ ուսուցողական աշխատանքային հանդիպում՝ Դեվինֆո 7-ի Սպառող և Կառավարող փաթեթների բոլոր հիմնական գաղափարները և առանձնահատկությունները, նորարարական տեխնոլոգիաների միջոցով նպաստելու տվյալների օգտագործմանը» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Կ.Եսայան/*

3.2. Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2013 թվականի հունիսի 3-ից 7-ը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) վիճակագրական բաժնի ու Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածքային գրասենյակի կողմից կազմակերպված «Պարենային ապահովվածության վերլուծությունը տնային տնտեսությունների հետազոտության միջոցով հավաքագրված պարենի սպառման մասին տվյալների հիման վրա» խորագրով տարածքային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

3.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2013 թվականի հունիսի 10-ից 13-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 61-րդ հերթական լիակազմ նստաշրջան և «Ռիո+20-ին հետամուտ լինելը. Կայուն զարգացման գնահատումը և շրջակա միջավայրի և տնտեսական հաշիվների համակարգի իրականացումը» խորագրով բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

3.4. Հաղորդում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Էշբորն, Ֆրանկֆուրտ քաղաքներում 2013 թվականի հունիսի 14-ին ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի /ՄԱԶԾ/ Մարդկային զարգացման զեկույցի գրասենյակի, Գերմանիայի միջազգային համագործակցության միության, Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կազմակերպած «Մարդկային զարգացման չափումը» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

3.5. Հաղորդում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Քյոլն քաղաքում 2013 թվականի հունիսի 17-ից 20-ը Եվրամիության վիճակագրական ծառայության և «ICONS-INSTYTUT»-ի կողմից կազմակերպված «Որակի կառավարումը վիճակագրական գործակալություններում» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա.Դաշյան, Հ.Եղիազարյան/

3.6. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2013 թվականի հունիսի 19-ից 20-ը «2011 թվականի ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/

3.7. Հաղորդում՝ Ուկրաինայի Ալուշտա քաղաքում 2013 թվականի հունիսի 25-ից 27-ը «Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Գլոբալ գնահատում և փորձագետների գնահատում. հետամուտ լինելը և հետագա քայլերը» խորագրով Հարավ-արևելյան Եվրոպայի, Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Միջերկրածովյան երկրների համար» բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

3.8. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2013 թվականի մայիսի 20-ից 24-ը «Արժույթի միջազգային հիմնադրամի հրավերով Վիեննայի Միացյալ ինստիտուտում կայացած «Կառավարության ֆինանսների և ազգային հաշիվների վիճակագրության փոխկապակցվածությունը» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

3.9. Հաղորդում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին քաղաքում 2013 թվականի մայիսի 27-ից 29-ը «Կոմունիկացիաները վիճակագրությունում» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

**Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

**19.07.2013թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ս. Դավթյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա. Մանանդյանը, ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը:

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1.«ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակները կազմելու կարգի» հրահանգը, «ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակների կազմման և ընդունման կարգի մասին» ցուցումները և «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություններում փորձնական գյուղատնտեսական հաշվառման աշխատանքները համակարգողի պարտավորությունները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Նշանյան/

**Որոշվեց՝**

Հավանություն տալ ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակները կազմելու կարգի հրահանգին, ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակների կազմման և ընդունման կարգի մասին ցուցումներին և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություններում փորձնական գյուղատնտեսական հաշվառման աշխատանքները համակարգողի պարտավորություններին:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

**29.07.2013թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, Լ.Պետրոսյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա.Մանանդյանը:

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1.«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Պետրոսյան/

**Որոշվեց՝**

2013 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հավելված 3-ի 3-րդ՝ «Մամուլի հաղորդագրություններ» բաժնի 1-ին տողի «հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 20-րդ օրը (2012 թվականի դեկտեմբերը՝ հունվարի 25-ին)» բառերը փոխարինել «հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 20-րդ օրը (2012 թվականի դեկտեմբերը՝ հունվարի 25-ին, իսկ 2013 թվականի հուլիսինը՝ օգոստոսի 21-ին)» բառերով:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

**07.08.2013թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ա.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, Լ.Պետրոսյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա.Մանանդյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը:

**Նիստում լավեցին հետևյալ հարցերը.**

1.«ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ» հարցաթերթը, հարցաթերթի հավելվածը և դրանց լրացման հրահանգը, «ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղական և քաղաքային համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 4-ԳՀՀ» հարցաթերթը և դրա լրացման ուղեցույցը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան/

**Որոշվեց՝**

Հաստատել «ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ» և «ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղական և քաղաքային համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 4-ԳՀՀ» հարցաթերթերը, հավելվածները և դրանց լրացման հրահանգները:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

2.«Օտարերկրյա ներդրումների մասին» Ձև 9-Ներդրում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2004 թվականի հուլիսի 26-ի թիվ 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Միջազգային երթուղիներում մատուցված տրանսպորտային ծառայությունների մասին» Ձև 1-Միջազգային տրանսպորտ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2002 թվականի օգոստոսի 9-ի 138-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Բնական գազի արտահանման և ներմուծման մասին» Ձև 1-Գազ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու մասին», «Բնական գազի արտահանման և ներմուծման մասին» Ձև 2-Գազ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու մասին» և «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի թիվ 144-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Բ.Պողոսյան/

### **Որոշվեց՝**

Հաստատել «Օտարերկրյա ներդրումների մասին» Ձև 9-Ներդրում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի: «Օտարերկրյա ներդրումների մասին» Ձև 9-Ներդրում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի: Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի հուլիսի 26-ի «Օտարերկրյա ներդրումների մասին» Ձև թիվ 9-Ներդրում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 15-Ն որոշումը: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

«Միջազգային երթուղիներում մատուցված տրանսպորտային ծառայությունների մասին» Ձև 1-Միջազգային տրանսպորտ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի: «Միջազգային երթուղիներում մատուցված տրանսպորտային ծառայությունների մասին» Ձև 1-Միջազգային տրանսպորտ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Միջազգային երթուղիներում մատուցված տրանսպորտային ծառայությունների մասին» Ձև թիվ 1-Ծառայություն (տրանսպորտ) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և կազմելու վերաբերյալ ցուցումները հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Բնական գազի ներմուծման մասին» Ձև թիվ 2-ԳԱԶ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և տարեկան հավելվածը հաստատելու մասին» թիվ 144-Ն որոշումը: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

«Բնական գազի արտահանման և ներմուծման մասին» Ձև 1-Գազ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

«Բնական գազի արտահանման և ներմուծման մասին» Ձև 2-Գազ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:



**3.«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականի հունվարի 1-ից իրականացվող զբոսաշրջության վիճակագրական հետազոտության 1-ին կիսամյակի անվանազերծված տվյալների բազան Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Բ.Պողոսյան/*

**Որոշվեց՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնին՝ Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013 թվականի հունվարի 1-ից իրականացվող զբոսաշրջության վիճակագրական հետազոտության 1-ին կիսամյակի անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

**4.«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» Ձև 1-հանրակրթություն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հուլիսի 24-ի թիվ 18-Ա անհատական որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/*

**Որոշվեց՝**

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» Ձև 1-հանրակրթություն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին: Սույն որոշման 1-ին կետում նշված հաշվետվության ձևը ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատվելուց և սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հանրա-

կրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» Ձև 1-հանրակրթություն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 26-ի ե թիվ 45 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 18-Ա որոշումը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

## **5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին**

5.1. Հաղորդում՝ Պորտուգալիայի Լիսաբոն քաղաքում 2013 թվականի ապրիլի 18-ից 19-ը «Սոցիալական գործընկերություն՝ ուղղված աշխատուժի առաջարկի և պահանջարկի համապատասխանեցմանը» խորագրով լաբորատորիային (սեմինար) մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

5.2. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2013 թվականի հուլիսի 15-ից 19-ը 2011թ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում Հայաստան - Վրաստան երկկողմանի համադրումների աշխատանքների ամփոփ վերջնական արդյունքների քննարկմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ. Մարտիրոսյան, Մ. Երիցյան, Կ. Ավետիսյան/*

5.3. Հաղորդում՝ Գերմանիայի Մյունխեն քաղաքում 2013 թվականի հուլիսի 22-ից 26-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության /ԳԴՀ/ Բնության, շրջակա միջավայրի պահպանության և միջուկային ռեակտորների անվտանգության դաշնային նախարարության կողմից ՀՀ բնապահպանության նախարարության ԵՄ Թվինինգ AM10/ENP-PCA/EN/06 «Աղտոտվածության համալիր կանխարգելման և մշտադիտարկման ոլորտներում ՀՀ բնապահպանության նախարարության կարողություններ» ծրագրի շրջանակում, որպես բնապահպանական տեղեկատվության կառավարման մասով շահագրգիռ կառույցի ներկայացուցիչ մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

### **Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

**28.08.2013թ. նիստին**

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Յու.Պողոսյանը, Գ.Գևորգյանը, Լ.Պետրոսյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Եղիազարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

1.«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մարտի 24-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:  
/Զեկուցող՝ Ա.Ավագյան/

***Որոշվեց՝***

Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մարտի 24-ի «Անտառային տնտեսության մասին» ՁԵՎ թիվ 1-ԱՆՏԱՌ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 11-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

2.«Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին անցկացվելիք փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում Կազմակերպական պլանների կազմման կարգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին անցկացվելիք փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում «Կազմակերպական պլանների կազմման կարգերը համաձայն հավելվածների»:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :*

**3.«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ-ին տրամադրելու թույլտվության մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշվեց՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :*

**4.«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշվեց՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի

Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

**5.«Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի նախագիծը հաստատելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Դաշյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագիծը՝ համաձայն հավելված 1-ի և «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

**6.«Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի նախագիծը հաստատելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Դաշյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի» նախագիծը՝ համաձայն հավելված 1-ի և «Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:*

**7.«Անհատական սպառումն ըստ նպատակների դասակարգչի նախագիծը հաստատելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Դաշյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Անհատական սպառումն ըստ նպատակների դասակարգչի» նախագիծը՝ համաձայն հավելված 1-ի և «Անհատական սպառումն ըստ նպատակների դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :*

**8. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին**

Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2013 թվականի հուլիսի 3-ից 4-ը «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» ծրագրի նախագծի քննարկման նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Անանյան, Ա.Ավագյան/*

**Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :*